



*Շրջակա միջավայրի նախարարության
«Հիդրոտեղեկատվության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

ԱԳՐՈՊԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2024


Հուլիսի երկրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոտեղեկատվության բաժինը՝ մասնագիտացված ագրոտեղեկատվության կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Մուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Հուլիսի երկրորդ տասնօրյակում հանրապետության շրջանների զգալի մասում օդի միջին ջերմաստիճանը եղել է նորմայի սահմաններում, տեղ-տեղ՝ 1 աստիճանով բարձր:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են հուլիսի 11-ին. Տավուշում գրանցվել է +28...+32°C (Բազումադեն՝ +35°C), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +26...+28°C, նախալեռնային շրջաններում՝ +35...+37°C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +35...+37°C, նախալեռնային շրջաններում՝ +27...+29°C, Շիրակում՝ +25...+30°C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +26...+29°C, նախալեռնային շրջաններում՝ +31...+33°C, Գեղարքունիքում՝ +23...+28°C, Լոռիում՝ +26...+30°C, Արմավիրում, Արարատում՝ +35...+37°C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +25...+27°C, նախալեռնային շրջաններում՝ +31...+36°C:


Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են հուլիսի 17-ին. Տավուշում՝ +17...+19°C (Դիլիջան՝ +12°C), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +9...+11°C, նախալեռնային շրջաններում՝ +18...+20°C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +20...+22°C (Կապան՝ +16°C), նախալեռնային շրջաններում՝ +10...+14°C, Շիրակում՝ +9...+14°C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +8...+13°C, նախալեռնային շրջաններում՝ +16...+18°C, Գեղարքունիքում՝ +9...+13°C, Լոռիում՝ +11...+15°C (Տաշիր՝ +9°C), Արմավիրում, Արարատում՝ +17...+20°C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +8...+11°C, նախալեռնային շրջաններում՝ +15...+18°C:

Տասնօրյակային տեղումներ












Տասնօրյակային տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 20-29մմ (139-163%), Լոռիում՝ 17-43մմ (82-207%), Տավուշում՝ 12-24մմ (61-165%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 29-30մմ (133-134%), նախալեռներում՝ 8-11մմ (96-143%), Գեղարքունիքում՝ 5-26մմ (69-292%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 25-34մմ (191-283%), նախալեռներում՝ 36մմ (480%), Արարատում՝ 2-5մմ (54-179%), Արմավիրում՝ 10-16մմ (250-390%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 8մմ (87%), նախալեռներում տեղումներ չեն դիպվել, Սյունիքի հովտային շրջաններում՝ 2-3մմ (24-38%), նախալեռներում տեղումներ չեն դիպվել:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը



Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են լեռնային շրջաններում՝ +6...+11°C, Արարատյան դաշտում, Տավուշի և Սյունիքի հովտային շրջաններում՝ +17...+20°C:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ



Հացահատիկային մշակաբույսեր



Նախալեռնային շրջաններում բազմամյա միջին ժամկետներին մոտ աշնանացան ցորենը լրիվ հասունացել է, լեռնային շրջաններում աշնանացանը շարունակել է գտնվել կաթնային և մոմային հասունացման փուլերում, իսկ հովտային շրջաններում բերքահավաքն ավարտվել է:

Բերքահավաքը ցանկալի է կատարել սեղմ ժամկետներում: Ուշացնելու դեպքում հատիկները թափվում են հասկերից, որի հետևանքով նկատվում է բերքի կորուստ:

Լեռնային շրջաններում աշնանացանի բարձրությունը փասնօրյակի վերջին կազմել է 80-92սմ, փասնօրյակային աճը կազմել է 6-10սմ:

Նախալեռնային շրջաններում շարունակվել է եգիպտացորենի հուրանակալումը, բույսի բարձրությունը փասնօրյակի վերջին կազմել է 185սմ:

Դրության գնահատականը լավ:

Պղղապտուներ

Լեռնային և նախալեռնային շրջաններում պղղապտուների մոտ տեղի է ունենում հասունացում և շաքարային նյութերի կուտակում:

Հովտային շրջաններում շարունակվել է բերքահավաքի աշխատանքները:

Եղանակային պայմանները նպաստավոր են եղել պղղապտուների հասունացման և շաքարային նյութերի կուտակման և բերքահավաքի համար:



Խոտաբույս, ծխախոտ

Լեռնային շրջաններում կապարվել է կորնգանի առաջին հունձ:

Հովտային շրջաններում կապարվել է առվույտի երկրորդ հունձ, դիպվել է ծխախոտի տերևների հասունացում:

